

9. ԱՒԵՏԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԷՋՄԻԱՄՆԵՑԻ
(1594^o—1623)

Առաքել Դաւրիժեցի թէեւ գիտէ թէ Մեւ-
քիսեղեկ կաթողիկոսի օրով էջմիածնի ա-
թոռին վրայ երեք եւ չորս կաթողիկոսներ
գոյութիւն ունէին, այս ինքն Դաւիթ, Մեւքի-
սեղեկ, Աւետիս եւ Սրապիոն, բայց՝ գիտ-
մամբ կամ ոչ, յայտնի չէ, եւ ոչ անգամ մը
յանուանէ կը յիշատակէ գԱւետիս :

Ա. Ա. Ալպոյաճեան¹ յեցած Գրիգոր Դա-
րանաղցոյ ժամանակագրութեան եւ Հ. Գ.
Գալէմբարեան² նոյն ժամանակագրի եւ ու-
րիշ ժամանակակից յիշատակարաններու վրայ
սպացոյցուցին թէ Դաւիթ կաթողիկոս, որ
չէր վստահեր իւր տկար ոյժերուն վրայ չփոթ
ժամանակի մը մէջ կառավարել անձամբ
Հայոց Եկեղեցին, ընտրած էր իրեն աթոռա-
կից բացի Մեւքիսեղեկէն նաեւ Աւետիսը : Որ-
չափ ալ պարզուած կարելի է նկատել հարցը
իւր էական դժերու մէջ, բայց տակաւին Աւե-
տիս կաթողիկոսի ինքնութիւնն եւ անոր գոր-
ծունէութեան սահմանը ճշդուած կարելի չէ
համարիլ ամէն մասամբ : Ինձ թոյլ պիտի
տամ միւսանգամ անդրադառնալ Աւետիս կա-
թողիկոսի անձնաւորութեան եւ այս առթիւ ի
մի համադրել ինձ մատչելի պատմական նիւ-

¹ Բիւզանդիոն, 1907, Թ. 3285 եւ 3424 :

² Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու
եւ տասն եպիսկոպոսներու : Վիեննա 1915, էջ 44—49 :
Հմտ. եւ Աղաւնուի, Միարանք, էջ 41 :